

Տ. ՄԱՆՈՒԿ ՔԱՀԱՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծնվել է 1962 թ. նոյեմբերի 28-ին Ադրբեջանի Հանրապետության Կիրովաբադ (Գյանջա) քաղաքում:

1969—1976 թթ. սովորել է տեղի Խ. Աբովյանի անվան № 10 հայկական միջնակարգ դպրոցում:

1976 թ. ընտանիքով տեղափոխվել են Հայաստան և բնակություն հաստատել Էջմիածին քաղաքում: Այստեղ ուսումը շարունակել է Երվանդ Օտյանի անվան № 7 միջնակարգ դպրոցում և ավարտել 1979 թ.:



1979—1988 թթ. աշխատել է զանազան բնագավառներում:

1988 թ. հաճախել է Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցի և մասնակցել հոգևոր արարողություններին:

1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1990 թ. տեղափոխվել է Գուգարաց թեմ ծառայելու և կրոնական դասեր է ավանդել Օձունի միջնակարգ դպրոցում:

1990 թ. նոյեմբերի 4-ին, ձեռամբ գերշ. Տ. Արսեն եպս. Բերբերյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1991 թ. մայիսի 8-ից ծառայել է Ս. Էջմիածնում՝ որպես սարկավագ:

1992 թ. փետրվարի 23-ին, ձեռամբ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է քահանա:

Այժմ հոգևոր ծառայության է նշանակվել Սյունյաց թեմում: